Հավելված N 2
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023 թվականի մարտի 22 -ի N 59-Լ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», «Առողջապահության մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով, Գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչությունը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է ՀՀ վարչապետը:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. կազմակերպում է ՀՀ Վայոց ձորի մարզում (այսուհետ՝ Մարզ) պետական առողջապահական ծրագրերի իրականացման գործընթացը, ինչպես նաև ապահովում է արդյունավետ բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.

2. կազմակերպում է մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական հաստատությունների աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով բնակչության անվճար բուժօգնության իրականացումը,

3. վերահսկում է պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունն օրենսդրությանը.

4. աջակցում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմիններին՝ բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս.

5. կազմակերպում և իրականացնում է Մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով.

6. համակարգում է զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական զննման, լաբորատոր-ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտության ու բուժման կազմակերպման աշխատանքները, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների, առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության հետ կապված աշխատանքների կազմակերպման, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրերի տրամադրման գործընթացը.

7. վերահսկում է Մարզի առողջապահական առաջնային պահպանման համակարգում հավաքագրված բնակչության մարզային ավտոմատացված ռեգիստրի (բազայի) ստեղծման և թարմացման աշխատանքները.

8. կազմակերպում և վերահսկում է Մարզի բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստման, վերամասնագիտացման գործընթացի իրականացման աշխատանքներն՝ ըստ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի ժամանակացույցի.

9. իրականացնում է մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական կազմակերպություններին անաշխատունակության թերթիկների, երեխայի առողջության անձնագրերի, բժշկական նշանակության այլ ձևաթղթերով ապահովման աշխատանքները.

10. վերահսկում և ապահովում է բուժհաստատությունների գործունեության ծավալների համապատասխանելիությունը առողջապահության նախարարության տրված չափորոշիչներին, բժշկական հաստատություններում դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, բաշխման, պահպանման և հաշվառման, բնակչության սոցիալական անապահով և առանձին /հատուկ/ խմբերին տրամադրվող անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայքի հատկացման աշխատանքները.

11. ապահովում է բնակչության պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի իրագործումը.

12. համակարգում և իրականացնում է մարզի սոցիալական աջակցության ծրագրերը և աջակցում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին մարզում սոցիալական աջակցության ծրագրեր իրականացնելիս.

13. ներկայացնում է առաջարկություններ համապատասխան պետական կառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրների վերաբերյալ: Աջակցում է սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների գործունեությանը, ապահովում համագործակցությունը մարզպետի աշխատակազմի հետ.

14. ապահովում է պաշտպանության նախարարության համակարգի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված ընտանիքների գործերի հավաքագրման, ցուցակների կազմման աշխատանքները: Աջակցում է զինված ուժերի զինծառայողներին, պահեստ արձակված անձանց, նրանց ընտանիքների անդամներին՝ սոցիալական, իրավական պաշտպանվածության ուղղությամբ տարվող աշխատանքներում.

15. համակարգում է սոցիալական աջակցության կարիք ունեցող փախստական բնակչության հաշվառման, սոցիալական ծրագրերի շրջանակներում փախստականներին մարդասիրական օգնությունների բաշխման աշխատանքները.

16. աջակցում է գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը: Ուսումնասիրում է համայնքներից հավաքագրած «Վարձատրվող հասարակական աշխատանքների» և «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրերի» վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, ամփոփում և ներկայացնում համապատասխան շահագրգիռ մարմիններին.

17. մասնակցում է Մարզի տարածքային զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներին.

18. իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնում է հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացնում Մարզպետին.

19. ապահովում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության և ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացնումը Մարզում: Մարզպետին է ներկայացնում երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվությունը.

20. ապահովում է Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի և հաջորդ տարվա իրականացվելիք միջոցառումների մշակման աշխատանքները.

21. ուսումնասիրում է Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերը, մշակում զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, և նախարարության միջոցով իրականացնում է Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.

22. ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ իրականացնում է Մարզում անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանություն, մասնակցում իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների հետ տարվող քննչական գործողություններին: Մասնակցում է դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.

23. ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ.

24. կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրությունը, ապահովում երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը.

25. վերահսկում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակման աշխատանքները, դրանով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպում խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ.

26. Ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարումը, որտեղ ենթակա են հաշվառվելու.

ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց և սահմանված կարգով ներկայացնում նախարարություն,

բ. որդեգրել ցանկացող անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում, լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է նախարարություն,

գ. որդեգրման ենթակա երեխաների մասին տվյալները և անձնական քարտի պատճենները ներկայացնում է նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,

դ. խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես խնամատար ծնողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում և լրացնում խնամատար ծնողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է նախարարություն,

ե. մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասներին (ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն),

զ. հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին,

է. մանկուց հաշմանդամ երեխաներին,

ը. սոցիալապես անապահով ընտանիքների, բուժական հաստատություններում, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում գտնվող երեխաներին.

27. պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում, ապահովում է առկա տարաձայնությունների լուծման աշխատանքները՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը: Իրականացնում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ.

28. անհրաժեշտության դեպքում ապահովում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին անդամ հանդիսացող Վարչության մասնագետների ներկայությունը, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը.

29. հետևում և աջակցում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությանը,

30. տարածքային մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոնի արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը.

31. իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի թվին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունը, տարածքային հաշվառումը, ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ փոխհամագործակցությունը,

32. համակարգում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող որդեգրել ցանկացող քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության որդեգրման ենթակա երեխաների տարածքային հաշվառման աշխատանքները.

33. համակարգում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող խնամատար ծնողի թեկնածու դառնալ ցանկացող քաղաքացիների տարածքային հաշվառման աշխատանքները.

34. կազմակերպում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն երեխայի տեղավորելու, հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձի գործընթացները՝ ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի համաձայն.

35. տալիս է վկայագիր հատուկ դպրոց ուղղորդվող երեխաներին՝ ծնողի և ՏՄԱԿ-ի եզրակացության և ծնողի դիմումի հիման վրա.

36. տրամադրում է դրական կամ բացասական եզրակացություն.

ա. որդեգրել ցանկացող անձին՝ Միասնական սոցիալական ծառայության եզրակացության հիման վրա և որդեգրման ենթակա երեխային:

բ. խնամատար ծնողի թեկնածու դառնալ ցանկացող քաղաքացուն՝ ՀՀ ԱՍՀ և ՆԳ նախարարություններին ուղղված հարցումների պատասխանների և ՄՍԾ եզրակացության հիման վրա:

գ. բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխային տեղավորելու,հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձի վերաբերյալ՝ ՄՍԾ եզրակացության հիման վրա,

37. աջակցում է երեխայի ծննդյան վկայականի ձեռքբերմանը՝ դրա բացակայության դեպքում.

38. համագործակցում է միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ:

39. Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կազմակերպում և համակարգում է Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

40. իրականացնում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթներ.

41. Կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ կայանալիք ամենամսյա ընդունելության համար ուսումնասիրում է քաղաքացիների դիմումները, բողոքները, կատարում տնային այցելություններ. Անհրաժեշտության դեպքում տալիս է մեթոդական պարզաբանումներ, տրամադրում խորհրդատվական օգնություն:

42. նախապատրաստում է վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, եզրակացություններ, միջնորդագրեր: Մասնակցում է ստացված նախագծերի քննարկումներին և ներկայացնում առաջարկություններ, կատարում դիտարկումներ:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Մարզպետը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Վարչության գործունեության կազմակերպման համար:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Մարզպետին: Մարզպետը վարչության պետի անմիջական ղեկավարն է:

8. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

9. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար

10. Վարչության պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: